



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՄԱՐՏ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 100

ԵՐԳ ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ:
Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ,
ցնծութեան երգերով եկէք անոր ներկայութեան:
Գիտցէք թէ Տէրը ինքն է Աստուածը:
Ան մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք.
Իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ինք կ'արածէ:
Գոհաբանութեամբ մտէք անոր տաճարը,
օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն ներս.
շնորհակալութիւն յայտնեցէք իրեն,
օրհնաբանեցէք իր անունը:
Բարի է Տէրը, անոր սէրը յաւերժական է,
եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԱՍՏՈՒԿԾ ԿՕՐՀՆԷ ՅԱԿՈՒԲԸ (35:1-15)

Աստուած կը հրահանգէ Յակոբին որ Բեթէլ երթայ, հոն ուր որ Աստուծոյ հանդիպած էր, եւ հոն Աստուծոյ համար սեղան մը շինէ: Այս հրահանգին դիմաց, Յակոբ իր ընտանիքի անդամներուն կ'ըսէ. **«Ձեր մէջ եղող օտար աստուածները վերցուցէք ու մաքրուցէք եւ հանդերձնիդ փոխեցէք»:** Այո, նախապայման է, Աստուծոյ հանդիպելու համար պէտք է որ մեր վրայէն վերցնենք օտար աստուածները, մաքրուինք եւ մեր հանդերձները փոխենք:

Ինչո՞ւ այս ծիսական մաքրութիւնը:

Այս դրուագը կը յիշեցնէ Մովսէսի դրուագը երբ ան կը պարտաւորէր ժողովուրդը Սինայ լեռան վրայ Աստուծոյ հանդիպելու: Ահա Ֆիզիքական լուացումը եւ մաքրութիւնը կը խորհրդանշէ հոգեւոր մաքրութիւն, աստուծոյ ժողովուրդը ըստ այնմ դաստիարակելու, որովհետեւ այդ օրերուն չունէին փակաւիճակ հոգեւոր մաքրութեան ըմբռնումը:

Երկրորդ, զարդերու պարագային, այսօր մենք գիտենք որ ոսկեղէն կամ ընդհանրապէս զարդեղէնները պարզապէս կրնան իբրեւ զարդ ծառայեն, թէեւ ոչ միշտ, բայց անցեալին այդ զարդեղէնները կապուած էին կուռքերու եւ չաստուածներու պաշտամունքին: Երբ ռեւէ մէկը չաստուածներու քանդակը կամ նշանը ունեցող ոսկի կը կրէր իր ականջին, թեւին, ոտքերուն, քիթին, աստուծոյ ցոյց կու տար, որ ինք կը պաշտէ փոխաւ չաստուածը: Ահա այդ իսկ իմաստով Յակոբ, որովհետեւ խոստացած էր, երբ առաջին անգամ հանդիպած էր Աստուծոյ, որ եթէ Աստուած իրեն ողջ եւ առողջ վերադարձնէ իր երկիրը, ինք եւ իր ամբողջ ընտանիքը զԱստուած պիտի պաշտեն: Ուրեմն պէտք էր ձեռքազատուին ուրիշ չաստուածներէ մոռնալու համար հեթանոսութիւնը որպէսզի կարելի ըլլար Աստուծոյ պաշտամունք ընծայելու:

Ի վերջոյ, հանդերձները, հագուստները փոխելու հարցը: Այս նմանութեամբ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Հանեցէք ձեր վրայէն հին մարդը եւ նորը հագէք»: Աստուածաշունչին մէջ հանդերձ, հագուստ արքայապարտութիւնը կապուած է մարդու նկարագրին, ինչպէս անունի պարագային: Ուրեմն կը նշանակէ, երբ Աստուծոյ պիտի հանդիպինք անհրաժեշտ է որ մեր վրայէն հանենք զարդերը, որոնք այս կամ այն ձեւով կը յիշեցնեն կապուածութիւն մը ուրիշ չաստուածներու, մաքրուինք հոգեւոր իմաստով, եւ փոխենք մեր նկարագիրը:

Այս հապտուածին մէջ Աստուած երրորդ անգամ ըլլալով կը յայտնուի Յակոբին, եւ այս անգամ կարծէք շար աւելի պաշտօնական ձեւով յայտնելու Յակոբին անունին փոփոխութիւնը. «ալ անգամ մըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, այլ Իսրայէլ»: Այս առիթով նաեւ Աստուած կ'օրհնէ Յակոբը ըսելով. **«Ես Ամենակարող Աստուածն եմ, աճիս ու շարնաս. քեզմէ ազգ ու ազգերու բազմութիւն թող ըլլայ եւ քու երանքեղ թագաւորներ ելլեն»:** Այս խոստումը ոչ թէ պարզապէս աճելու եւ բազմանալու, այլ ըլլալու այնպիսի սերունդ մը որմէ ազգեր, թագաւորներ պիտի ելլեն ոչ թէ նոյն գիծի, այլ նաեւ փարբեր ազգութեանց պարկանոդ: Պերրոս Առաքեալ իր ընդհանրական նամակին մէջ պիտի ըսէ. «Դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը» (Ա Պերրոս 2:9):

ՌԱՔԷԼԻՆ ՄԱՀԸ (35:16-20)

Այս հապտուածը կը ներկայացնէ Բենիամինի ծնունդը եւ Ռաքէլի մահը: Բենիամինի ծնունդը փեղի կ'ունենայ Եփրաթայի կամ Բեթլէհէմ քաղաքին մէջ: Անցեալին, հաւանաբար, այս երկու անունները քով քով վայրեր էին, եւ ժամանակի ընթացքին մէկի վերածուեցան, եւ կամ Բեթլէհէմ քաղաքը կը գրնուէր Եփրաթա կոչուած գաւառի մէջ: Հերաբրքրական է, որ նոյն գաւառին երկու փարբեր անուններ կը փրուին. մօրը կողմէ Բենօնի, որ կը նշանակէ նեղութեան գաւառ, իսկ Յակոբի կողմէ՝ Բենիամին՝ աջ ձեռքի որդի, որ նաեւ կը նշանակէ յաջողութեան գաւառ: Ամենահերաբրքրական մասը սակայն այս հապտուածին այն է, որ Բեթլէհէմը կը նշանաւորուի մէկ կողմէ Բենիամինի ծնունդով, իսկ միւս կողմէ Ռաքէլի մահով: Ծնունդ եւ մահ: Արդեօք կապ մը կարելի է՞ փեսանէլ այս երկուքին մէջ: Այո: Բեթլէհէմը այն վայրը եղաւ ուր Յիսուս ծնաւ, իսկ նոյն վայրին մէջ փեղի պիտի ունենար նաեւ մահը մանուկներուն:

Այս հապտուածին մէջ նաեւ կը յիշուի Ռուբէնի արարքը, որ պիտի պղծէր հօրը՝ Յակոբի անկողինը, անոր Բաղդա հարճին հետ պառկելով, որուն հետեւանքը պիտի ըլլար, որ ան առաջին պիտի ըլլար: